



ՀԱՅԻՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԱՐԱՐԱՆԻ ԱՐԽԱՆԻ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 119

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1913

ԿՐՏՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ
ԵՆՈՐ
ՏՈՒՐՈՒ

ԵՍ

ԵՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Քուրսիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. .— Արսասան-
ման տար. ներ. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են .

ՀԱՍՏԷ .— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4.
Պոլիս:

GAFOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinop'le

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մտնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՄԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրաւ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահազգներ, եւն., եւն.: Դիւերը անմեղքի կերպով աժան են:
Դեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի 1 Նոյեմբեր 1913 Թիւ 119

«Սրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կր մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
տունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1913, ընդ 60780 քուսմանաւառ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ՄԵՇ ՅՈՒՆԵԼԵԱՆՆԵՐ

Հայ ազգիս ուղղափառ կրօնիս համար
երկու անմոռանալի դարագլուխ կազմող
կրկին մեծամեծ ղեկավար ի մի ձուլեցան 1912-
13 թուականին մէջ. Մեր միտքը յառաջա-
նալով դարերու դժբաղդ պարագաներու մէ-
ջէն, և քալելով 1500 տարիներ, կանգ
կ'առնու ապշահար, արշալուսային երանգ-
ներով փողփող երկու սուրբ պատկերներու

առջեւ, շնորհքի եւ հանճարի զուգադէպ շա-
րակցութեամբ պերճապերճ երկու անզուգա-
կան անձնաւորութեանց հանդէպ. — Սահակ
ու Մեսրոպ, Հայրապետ ու Վարդապետ, եր-
կուքն ալ սուրբ, երկուքն ալ գիտուն, եր-
կուքն ալ ուղղափառ: Այս անհամեմատ ա-
մուլն է որ ճոխացուց Հայ ազգը թանկագին
զանձովն դպրութեան. բարբարոսութիւնը
փոխադրեց քրիստոնէածին քաղաքակրթու-
թեան, որոյ շնորհիւ միայն հայը միաց մարդ-
կութեան մէջ բարեմասն, պահեց քրիստոնէ-
ութիւնը և քրիստոնէութեամբ պահեց ազգը
ի հաղորդութեան Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ,
որուն Գլխուն իր հպասակութեան հաւաս-
տիքը տարած էր մինչեւ Հոռոմ Լուսաւորիչ
Հայրապետը. եւ ահա այնչափ աղէտներէն
վերջ, մինչդեռ իրեն հարեւան ամենապերճ
ազգինք մուխի պէս կորան, կանգնած է դեռ
այսօր ազգ մը դարաւոր, շնորհիւ նաեւ

այդ հիասքանչ երկու ամուսնուհիներ, ուղղափառ Հայրապետին, և ուղղափառ և Վարդապետին:

Մեսրոպ, անդուլ ու չարաչար աշխատութեամբ գիւտն ըրաւ Հայ գիրերու, որոնք իրենց ճոխութեամբ, դիւրուսոյց և ճկուն արտասանութեամբ, գեր ի վերոյ են ամէն ազգաց աշխարհներու: Սահակ, մշտատեւ ջանիւք եւ գործակցութեամբ Մեսրոպի հետ, աննման մատենագրութեան դանձր ժառանգեցուց մեզ: Աւարդ, շատ կարճ միջոց մը, բայց համակ ոսկեղէն, գոհարեղէն, Հայուն հպարտութեան արժանաւոր, լեզու մը որ կը գլէ Պղատոնին եւ Կիկերոնին իսկ արքայապետն ասացուածը. լեզու մը, սոխակի դայլայլիկ, զոր կ'արժէ սորվիլ՝ սքանչանալու համար միայն, երգելու համար երկնաւոր Սէրը, խօսելու համար Աստուծոյ հետ, քարոզելու համար Մարգարեալ Բանին անհասանելի սքանչելիքները:

Եւ Սահակ ու Մեսրոպ երգեցին Հայուն համար երկնաւոր Սէրը, Հայ ազգը խօսակից ըլին Աստուծոյ հետ, Աստուածաշունչին անգին դանձր բացին Հայուն առջեւ, թափեցին լիարուսն, իրենց մարգարտայեռ լեզուաւ: Եւ Սահակ ու Մեսրոպ ուղղափառութեան հետ սերտիւ եւ անքակտելի զօգեցին Հայը, գլխաւոր Եկեղեցւոյ ուղղափառ Հայրապետաց գանձերն ալ բերին՝ նոյն լեզուաւ. ու մերը եղան Ոսկեբերաններ, Սերբերիանոսներ, Կիւրեղներ, եւն. Հանճար եւ Կրօնք, գիր ու փառարանութիւն, գիտութիւն եւ Ուղղափառութիւն ի մի ձուլեցան Արարատի մէջ: այս քաղցրաբարբառ զոյգ աղանձիւններն՝ Բերիստոսի միակ Եկեղեցւոյն Տապանին բերին խաղաղութեան եւ ուղղափառութեան խորհրդանշան ձիթենւոյ ճիւղը: Օրհնեալ ըլլայ անոնց յիշատակը:

Այս շնորհունակ յիշատակին հետ սքանչելի զուգադիպութեամբ կը միանայ Հայ տպագրութեան նախախայրիքն ալ, 400 տարի առաջ, 1512-13ին «Մեղապարտ Յակոբ»ի նախաձեռնութեամբ, որ պարծանք է իր յառաջընթացութեան համար, և յարգելի՛ այսքան բարիքով զազգը օժտելով:

Վենետիկոյ մէջ, Ուղղափառաց մէկ մայրաքաղաքին մէջ, ծնունդ առաւ, և ապա հո'ն, Ուղղափառ Հայոց ձեռք ուռճացաւ և պտղաբերեց Հայ տպագրութեան բարերար ձեռնարկը, և արթնցուց ու յառաջգիմութեան ճամբուն վրայ դրաւ Հայ ազգը:

Ուրեմն այս երկու տօնախմբական մեծ յիշատակները գլխաւորաբար Կաթողիկէ Հայուն սեպհականութիւններն են, առիթ մեր ամենուն ուրախութեան և շնորհաւորութեան:

Արդ, նախ՝ ինչո՞ւ համար Հայ Կաթողիկէ համայնքը մասնաւորապէս չտօնեց այս Յորեկանները...

— «Բարեկացւոց գետերուն քով նստած կուլայինք, երբ յիշեցինք հոն մենք զՍիրովն: Անոնց ուռնիներուն մէջ կախեցինք մեր կտակարանները: Հո'ն՝ զմեզ գերի ընողներն կը պահանջէին մեզմէ օրհնութեան երգեր. մեր գերեվարները կը բռնադատէին զմեզ ու կ'ըսէին. — Երգեցէ՛ք մեզի Սիօնի երգերէն: Իսկ մենք ինչպէ՞ս երգենք Աստուծոյ օրհնութիւնը օտար երկրի մէջ: Եթէ մոռնամ զքեզ, ո՛վ Երուսաղէմ, թո՛ղ մոռնայ զիս իմ աջ ձեռքս: Իմ լեզուս քիմքիս թո՛ղ փակչի, եթէ չյիշեմ զքեզ. եթէ ամէն բանէ առաջ զքեզ չերգեմ, ո՛վ Երուսաղէմ, սկզբնապատճառ իմ ուրախութեանս: Յիշէ՛, Տէ՛ր, Եղովմայ գաւաղները, թէ ինչ ըրին Երուսաղէմի օրերուն մէջ: Անոնք կ'ըսէին. «Բակեցէ՛ք, քակեցէ՛ք, մինչեւ հիմը հասցուցէք» (Սղմ. ԺԼԶ.)...:

Երկրորդ, ինչո՞ւ չի մասնակցեցանք էջմիածնականաց սարքած հանդիսութեանց:

Որովհետեւ՝

1. Անոնք բացայայտ կերպով կրօնական նշանակութիւն տուին այս Յորեկաններուն: Ձենք փիլիսոփայեր, պարզ իրականութիւնը կը խօսինք, իրենց թերթերէն: Յայտարարեցին թէ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, գրեթե գիւտով ու մատենագրութեամբ՝ ազգային անկախ եկեղեցի հիմնեցին, անջատելով Կաթողիկէ միակ Եկեղեցիէն: Եզրակացութիւննիս յայտնի է:

2. Ընտր համար իրենք տօնեցին այդ Յորքեանները, քանզի էջմիածնի Կաթողիկոսը առանձին կոնդակաւ հրամայած էր տօնել:

Ուղղափառ Կաթողիկոսութիւնը չէր կրնար ըստ այն հրամանաց գործել՝ ստորկարար և իւր հպատակ:

3. Էջմիածնականք ստիպողաբար պահանջեցին պաշտօնական յայտարարութեամբ՝ բնաւ չնանցնալ Կաթողիկէից Կաթողիկոսը և այդ յայտարարութեան վրայ միայն փակեցին անհամ վիճաբանութիւնը: Ս. Քահանայապետին, Օսմ. Կառավարութեան, Քրիստոնեայ պետութիւններու, զեսպանատանց, Յոյն Պատրիարքութեան ևն., պաշտօնապէս ճանչցած Կաթողիկէ Կաթողիկոսը՝ էջմիածնականք զաւանդութիւն յայտնեցին չճանչնալու: Եզրակացութիւնը լուսոյ ճառագայթի մը պէս կը ցայտի:

4. Ընդհակառակն, պաշտօնապէս ճանչցան բանադրեալ և լոկ աշխարհական ժողով մը՝ իբր ներկայացուցիչ Հայ-Կաթողիկէութեան, և անոնց պաշտօնական հրաւերը ղրկեցին:

5. Եւ հատուցուեցաւ իրենց արժանապէս, բայց ո՛չ Կաթողիկէապէս:

«Դուք փառս ի միմեանց առնուք, եւ զփառս զառ ի միոյն Ասուծոյ ո՛չ խնդրեք: Մի՛ համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձեզ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձեզ, Մովսէս, յոր դուքն յուսացեալ եք» (Յովհ. Ե.):

Այո՛, Սահակ եւ Մեսրոպ եւ միւս բոլոր հայ Ուղղափառ Հայրապետք չարախօս պիտի ըլլան...

Վարչական ըսուած ժողովը ճառախօսներ անուանեց՝ կամ անկրօն կամ անտարբեր, այսպիսի սրբազնասուրբ Յիշատակաց համար, Վարուժան, Մալխաս, Բարսեղեան...

Նոյն իսկ Ոսկեան Գր. Էֆ. Էջմիածնակաց քով իր պաշտօնական ճառին մէջ քանիցս կրկնեց «Հայուն հաւատարիմ մնալը (?) իր երջանկախաւ Հայրերուն Ս. Կրօնքին» — «Ամէնքս ալ, Հայ եղբայրներս, կը փափաքինք անտարակոյս ըմբռնած ըլլալ այդ

տօներուն նպատակը, որ կրօնական թէ ազգային տեսակէտով՝ միշտ միեւնոյնն է առհասարակ, այն է՝ հոգւով, սրտով ու մտքով զօրանալ եւ զարգանալ միշտ աւելի ջերմ սիրով գուրգուրալու համար ՄԵՐ Ս. Եկեղեցւոյն՝ եւ մեր Հայ անուան վրայ, որք մեր անկապտելի փառքն ու պարծանքն են, եւ պիտի մնան առ յաւէտ»...

* *

Մենք, ուրեմն, ճշմարիտ Կաթողիկէայքս սրտագին ցնծութեամբ բայց անպաշտօն տօնեցինք այս Սուրբ Հայրապետաց քաղցր յիշատակը, եւ աղօթեցինք որ անոնց բարեւասութեամբ նախ մեր մոլորեալ՝ եւ ապա, զժախտաբար մեր անջատեալ հղբարց թելադրէ՝ Տէր այս յիշատակներուն ճիշդ եւ ուղղափառ իմաստն ու նշանակութիւնը, որով միայն կրնայ ճշմարտապէս պանծալ Հայ ազգն յաւէրս:

ՖԵՆԷԼՕՆԸՆ ԻԼՔ ՔԱՐՈԶԸ

Պունտան իբի երեզ սէնէ ազտէմ, Ֆենէլօն զէմանընտա, սիլքի բուհանիյէ տախիլ օլմագ իսթէյէն կէնճլէրին Ֆեննի պէլաղէթտէ միւմարէսէ բէյտա իտէպիլմէլէրի իչոն, Բարիզին պէօյիւք օթէլլէրինտէ էրքէք վէ գատընտան միւթէշէքքիլ բարլագ ճէմիյէթլէր զարչըսընտա իրպտը նութգ էթմէք Խտէթի վար իտի: Ֆենէլօն զաթէն 15 Կալչնտա օլուպ էլպիսէյի բուհանիյէյի տէ լապիս պուլունուեօրաը: Էնլի զիւհա, լաթիֆ, էտիպ, չալըզան, ալիմ վէ, պախուսուս, ֆուգարայա զարչը զայէթ մէրհամէթլի իտի: Ֆենէլօն Մարքիլի պուլընան բէտէրի, օլլունըն միւլ վէֆֆագիյէթինտէն էմին օլտուղընտան, կէնճ թալիպին մուգատտէմէյի միւմարէսէսի իչոն Պուֆլէր օթէլլինի ինթիխապ իթմիշտի: Պիւնաէն ալէյի կիւն թաեին օլմուշ վէ սամիուսը թէշէլի իտէճէք զէվաթ տա տալէթ իտիլմիշտի: Զաթէն, բիճալը հիւքիւմէթ վէ օն տէօրտիւնճիւ Լուինին սէրայ խանըմարը պու խուսուստա ինզար իտիլմիշ օլան պա-

լծնտա ախզը մէվգի իթմիշէրտի, վէ կէնճ խաթիպին մէյտանա չըգմամսընա թէաճ. ճիւպ խաթիպարտը, Պու թէէխսիւրէ հիշ պիր մանա վէրէմէյէն բէտէրի, Մատամ Պուֆլէր վէ տիկէր զէվաթը մէշհուրէ նէգտինտէ օղլուընը թէպրիյէյէ չալըշմագտա իտի:

Նիհայէթ, կէնճ Ֆէնէլօն, ալնը հիճա պընտան պիրազըճըզ գըզարմըշ օլարագ սալճնա տախիլ օլուր վէ հազըրլանմըշ օլան մասանըն գարշըսընա օթուրուր: Հէր քէս սիւքիւթ իթմիշտի:

«Էֆէնտիլէր, խանըմլար, ճէմիյէթի ալիյէնիզի պէքէթտիյիմտէն տօլայը աֆվընըզը իսթիքնամ էյլէրիմ» տէր: «Յագաթ սիզի պիր սահաթ տահա ֆազլա պէքէթտիւրմէք լազըմ կէլսէ, վէ պիզզաթ գրալ պիլէ պուրատա հազըր օլսա, երնէ տէ պէն սիզի պէքէթտիւրմէքտէն չէքինմէյէճէքտիւմ Պուֆլէր օթէլինէ միւվասէլէթիւմ էսնասընտա, պիր էվին քիւշէսինտէ, եէրէ եաթմըշ վէ շու անտէ եաղան» շիտտէթլի գար իլէ նիւմ մէսթուր գալմըշ պիր ֆագիրէ թէսատիւֆ էյլէտիւմ Պու մէնզարէ պէնի էլիւմ սուրէթտէ միւթէէսիր էյլէտիյինտէն, օրատա թէվազգուֆ իթտիւմ վէ օզէվալըն չօճուղա եագլաշտըմ:

— «Պուրատա նէ՞ եաբըյօրսըն, ազիզիւմ,» տէտիւմ ծնա:

«Օ պաշլատը աղլամայա վէ պէնիւմսիւալլում ճէվապ վէրմէքսիզին, շու պատիի եէս քէլամարը թէլաֆֆուզ իթտի:

— «Պէն էօլմէյի իսթէյօրմ:»

— «Էօլմէ՞ք մի, ազիզիւմ Տէմէք սէն զայէթ պէտպախթսըն, սէնի սէվէն քիմսէն եօզ տըր:»

«Էվվէթ, էֆէնտի, պէն սօն տէրէճէ պէտպախթըմ: Արթըզ պէնիւմ իշիւմ պիթմիշտիր: Պէն արթըզ վալիտէմին եանընա տէօնէմէմ: Պէնիւմ էօլմէքտէն պաշգա չարէմ գալմամըշ տըր:»

Իտիւնի, սիննինի վէ սէպէպի քէտէրինի սօրտըմ: Օ, իշթէ հիքեայէսինի շու սուրէթլէ նազլ իթտի,

«Պէնիւմ իտիւմ Բիէր տիր, 12 եաշընտալըմ: Պէն Սափուալըն վէ պէշ սէնէտէն պէ-

րի վալիտէմի, տար ու տիյարըմը թէրք իթմիշիւմ: Իշ պուլտըգճա օճագ թէմիզլէմէքլէ մէշղուլ օլտոււմ քի բարա գաղանայըմ վէ պիր մըզտար բարա արթըրայըմտա պիր ան էվվէլ վալիտէմէ կէօթիւրէյիւմ: Այ ազ պի թարաֆա գօտուղըմ բարա 315 լիրա (պու կիւնքի ֆրանք) գատար օլտու քի պէն պու բարայը եաթտըղըմ անպարտա պիր քիթէմիթ ալթընա սագլամըշտըմ, գալպիւմ ֆէրահ օլարագ, Սափուայա տէօնէճէք օլան իքի ազրապամլա պէրասպէր կիթմէյէ: հազըրլանմագտա իտիւմ Պու սոպահ խազինէմի ալմագ վէ պիր քէսէյէ գօմագ իւզրէ քիթէմիտի գալտըրտըմ: մա էթ թէէսսիւֆ եէրինի պօշ պուլտըմ: Ահ, վար օլանըմը չալմըշար: Արթըզ մէմէքէթիւմ տէօնէճէք եիւզիւմ եօզ տըր: Հէր քէս զանն իտէճէք քի պէն էպէվէնիւմ ունութմուշ միւսրիֆլիքլէ եաշամըշտըմ: Շու հալտէ պէնիւմ էօլիւմտէն պաշգա չարէմ եօզ տըր:

«Էֆէնտիլէր, խանըմլար, ֆէրեատ ու ֆիղանլարընպան սէօյլէմէյէ մէճալը գալմամըշ վէ սօղուգտան տօնմագ հայինէ կէլմիշ օլան քիւշիւք Բիէրօնըն հիքէայէսինին խիւլասաաը պուլտան իպարէթ տիր: Պէն ծնը գուճագլատըմ վէ պու օթէլին գարուճըսընա գատար կէթիրիպ ծնա թէսլիւմ իթտիւմ: Մատամ քի Հիքմէթի իլահիյէ գարշըմա պէօյլէ պիր էսէրի խայր կէօթէրմէք ֆրսաթը չըգարտը, պէն տէ ծնը գաշըրմագ իսթէմէտիւմ, վէ մատամ քի Յիսուս Բրիստոսըն պու քիւշիւք Ֆագըրճըղազը ճէմիյէթի ալիյէնիզին պինի իսթիւմա իթմէք իւզրէ իճթիւմ էյլէմիշ օլտուղը պու օթէլտէ պուլընմագտա տըր պու սէպէպէ մէպինի սիզէ, պէնտէն ինթիգար իթտիյինիզ նութը իրատ իթմէքտէն իսէ, քիւշիւք սափուալըտան պահա իթմէյի տահա զիյատէ թէրճիէ էյլէտիւմ: Պինաէն, ալէյհ, ֆուգարա պապասը, քէտէրլիլէր միւլթէսէլլիսի Յիսուս Բրիստոսըն նամընա ըէճա էտէրիւմ քի, մուգատտէրաթը հիւմմէթլինիզ մուհավվէլ գալմըշ օլան օ ֆագիր իշուս սատագալարընըզը տիրիզ պուլյուրմայասընըզ Սիզին իշին պիր կիւմիւշ վէ եա ալթուս բարա հիշ մէսապէսինտէ տիր: հալ պու քի օ զէվալըն իշուս պէօյիւք շէյ տիր, ծնուն մէսէր-

րէթի, հայաթը ու սատէթի տիր: Էֆէն-տիւէր, խանըմար, վերինի՛ղ, վէ պիզզաթ ծէնապը Հագգտան մուգապիլինի ալաճագ սընըզ»¹, տէր կէնճ Ֆէնէլօն:

Իրթիճալէն իրատ օլունան պու սատէ օլ-տուղը գատար տա միւլէսսիր պուլընան նուլթգ էմնասընտա, տիկէր պիր նուլթգըն ինթաճ իտէմէյէճէյի պիր սուրէթտէ, բէք չօգ կէօզէր բիզգաթ կէօզ հաշարըլլա ըս-լանտըլար: Կէնճ խաթիպ, պու կիպի պիր ճէսարէթիտէն նաշի նէվէմա մահճուպ, Ֆա-գաթ զայէթ միւլթէհէյեիճ պիր հալտէ, Մար-քիզ Պուֆլէր տէլալէթիլէ սալօնա կէթիրիլէն պիշարէ Բիէրօնըն մէնֆաաթընա սատագա տէրճինէ պիզզաթ քէնտիսի թէշէպպիւս իթ-միշտի:

Ֆագիր չօճուղըն լաթիֆ վէ սատէտիլ սի-մասը ալնի զէմանտա օնուն հէ՛մ էսէֆ վէ հէմտէ հայրէթլէ միւլթէհասսէս օլտուղընը ի-րայէ իտիյօրտը քի պու հալ Ֆէնէլօնըն, հա-զըրուն էֆքեարընտա թէհիլէ էյլէտիլի հիս-սիյաթա գիյատէ թագվիլէթ վէրտի: Չօճուգ իսթիճվապ իտիլտիլինտէ, քէնտի մէմէքէթի լիսանըլլա, պալէսատէ պասթ օլունան հիքեա-յէսինի թէքրար նազլ էյլէտի: Պունըն իւ-զէրինէ Մատամ Պուֆլէր չօճուղըն մէնֆաա-թընա օլարագ զայէթ միւլէսսիր պիր թարզ-տա իտարէյի քէլամ իտուպ վէ պիզզաթ չօճուղըն՝ րէնկինի աթմըշ օլան գալըրաղը-նըն իշինէ իանէ թօբլայաճաղընը վէ «ալ-թունտան պաշգա բարա ալմայաճաղընը» տա իլավէ էյլէմիշ տիր:

Մատամ Պուֆլէրին իւզէրինտէ ալթուն բարասը պուլընմատըղընտան քիւրէսինի չը-գարըպ իանէթէն վէրիր: Լուի վէ չիֆթէ Լուի ալթունլարը տօլու կիպի եաղարլար չօճուղըն գալըրաղընըն իշինէ: Ֆէնէլօն մէ-սէրէթիտէն աղլայօրտը...:

2000 ֆր. տան գիյատէ պիր իանէ թօբ-լանմըշտը, Չօճուգ բիւլա կէօրիւյօր գանն ի-տիյօր վէ պու գատար ալթունըն քէնտիսի-նին օլտուղընա ինանամայօրտը. պուսնա թէքմիլ գանի օլտու իսէ, էթրաֆընտա պու-լընանլարը պիւսապիւթիւն ունուլթմուշ վէ եաղընըզ վալիտէսինի տիւլինէրէք սէվինճինս

տէն կիւլմէյէ վէ սըյրամայա պաշլամըշտը:

Պուֆլէր Մարքիզի, պու կիպի էյի պիր միւսամէրէ կէշիրմէլէրինէ սէպէպ օլտուղը իշուն, հուզղար նամընա Ֆէնէլօնա պէյանը թէշէքքիւր էտէր վէ չօճուղը տա պիր գաշ կիւն խանէսինտէ ալըգօտըգտան սօնրա պաշ-տան ալաղա օնը կիյինտիրիր վէ բէտէրի, վալիտէսի, պիրատէր վէ հէմշիրէլէրի իշուն կիւզէլ հէտիլէլէր վէրէրէք եօլ մէսարիֆինի տէ իլավէ իտիպ 2000 ֆրանքը 3000է իպլազ էյլէր վէ սալիմէն վալիտէսինէ եթիշտիրիր:

ԱԶԳ ԵՒ ԿՐՕՆՔ (*)

(Շար.)

Բ.

ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ՀԻՆ ԱԶԳԱՅ ՄԵՋ

Հին ազգաց պատմութիւնը ուսումնասի-րած ժամանակնիս՝ մարդկութեան ալիււայլ մասերն գրեթէ իրարմէ անջատ կը գտնանք, այնպէս որ իւրաքանչիւր ցեղ ինքրմէջ գոց-ուած, իրմէ դուրս ոչինչ կ'ուզէր ճանչնալ, ոչ կրօնք, ոչ ճշմարտութիւն, ոչ Աստուած, ոչ օրէնք, ոչ դատարարակութիւն, ոչ գի-տութիւն, ոչ արհեստ: Օտարն՝ պարզապէս օտար ըլլալուն համար արժէք չունէր, և նոյն իսկ վնասակար կը համարուէր. որով օտարին հանդէպ թշնամական ընթացքէ զատ վարմունք կարելի չէր. ինչ որ այլեւայլ ազ-գերու մէջ յարատեւ պատեյազմի դուռը բաց կը թողուր: Այսպէս Ասորեստանեայք, Բա-բելացիք, Պարսիկք, Քաղդէացիք, Եգիպտա-ցիք, Յոյնք, սովորաբար առանց ո և է բա-նաւոր պատճառի, իրարու վրայ կը յարձա-կէին, կը բաւէր որ իրենց ոյժերուն վրայ վստահ ըլլային թէ յաղթութիւնը իրենց պիտի մնար:

Բաժանման այս միտումն այն աստիճան ծայրայեղութեան գացած էր որ շատ անգամ նոյն ցեղին այլեւայլ ճիւղերուն, և նոյն իսկ այլեւայլ քաղաքներու մէջ մեծ անջրպէս մը

(*) Տես թիւ 117 էջ 668

կը բանա՛ր, որուն արդիւնքն կ'ըլլար փոխա-
դարձ ամենամեծ թշնամութիւններ և զիրար
փճացնելու վայրենի ճիգ մը, ինչպէս կը
տեսնանք Եգիպտական և Յունական այլեւ-
այլ քաղաքներու միջեւ մէկըմէկ հիմնայա-
տակ կործանելու կամքով մըլուած յարա-
տեւ եւ ծնականի պատերազմներու առ-
թիւ:

Իւրաքանչիւր ազգի համար՝ իրմէ՛ դուրս
եղողներն բարձրորոններ, վայրենիներ էին և
նոյն իսկ մարդկութեան մասն կազմելու ա-
նարժան, և գրեթէ միշտ անարգական ա-
նուններով կը յիշուէին: Ինչ որ ամենածանր
անիրաւութիւն կը համարուէր իւր ցեղակցին
Նկատմամբ՝ շատ անգամ օրինաւոր և նոյն
իսկ վարձատրելի կը նկատուէր օտարին հան-
դէպ, վասնզի զուրկ էր մարդկութեան իրա-
ւունքէն: Ահա ասկէ առաջ եկած էր իսեւ
հին ազգաց այն մեծ վէրքը, գերութիւնը
զոր այնչափ դժուարին եւ երկայն գործ եղաւ
ջնջել:

Այս սկզբունքէն մեկնելով՝ հին ազգերն
մշտատեւ պատերազմական վիճակի մը են-
թարկուած էին, որովհետեւ իւրաքանչիւրը
միշտ պատրաստ պէտք էր ըլլար կամ իւր
զրացւոյն վրայ յարձակելու՝ զայն ոչնչացնե-
լու, անոր երկիրն, հարստութիւնները գրա-
ւելու և բնակիչները գերի ընելու համար՝
քանի որ դոյութեան իսկ իրաւունք չունէր,
և կամ նոյն սկզբան հետեւանօք իրեն դէմ
յարձակողներուն դիմադրելու, որովհետեւ
ազգերու յարաբերութիւնները միայն և բիրտ
ոյժի վրայ հիմնուած էին:

Ընդհանուր մարդկութիւնը վարող այս
սկզբունքին հետեւանքներէն մին ալ այս էր
որ իւրաքանչիւր ցեղ կամ հաւաքում՝ իւր
գոյութեան պահպան եղող ոյժը միշտ հաս-
տատ պահելու համար, ամէն միջոց օրինա-
ւոր կը համարէր և ահա այսպէս յառաջ
կու գային այն անդուծ օրէնքները որոնք
անխնայ ոչնչացման կը դատապարտէին իւ-
րաքանչիւր հասարակութեան տկարակազմ
կամ անօգուտ անգամները, որպէսզի աւե-
լորդ բռններէ թեթեւցած՝ կազմ և պատ-

րաստ գտնուէին ի հարկին իրենց գոյութիւ-
նը կարենալ պաշտպանելու:

Սոյն օտարատեաց քաղաքականութեան
մէկ արդիւնքն ալ սա կ'ըլլար որ տիեզերաց
այլեւայլ կողմերը հաստատուած զանազան
ցեղերն ու ազգերը շատ քիչ չափով կրնային
օգտուիլ ուրիշ ազգերու կատարած յառաջ-
դիմութիւններէն, այլ իւրաքանչիւրը՝ այլա-
մերժ ինքնամոխիմամբ մը՝ կը գոհանար իւր
մէջ գտնուող ոյժերու մշակութենէն: Այնպէս
որ եթէ երբեմն օտար մը ամենամեծ օգուտ-
ներն իսկ տուող գիւտ մը կամ գիտութիւն
մը կամ ճշմարտութիւն մը ներմուծել ու-
զէր, հեղինակին օտար ըլլալը բաւական էր
զայն անմութեան դատապարտելու:

Այսպէս Փիւնիկեցւոց վաճառականու-
թեան և նաւավարութեան համար ունեցած
հմտութիւնը, Եգիպտացւոց՝ հաշուական եւ
այլ բազմակողմանի գիտութեանց մասին
զարգացումը, Յունական փիլիսոփայութիւնը
և գեղարուեստը որոնք իւրաքանչիւրը անշա-
տարար սքանչելի արդիւնքներ տուած ըլլա-
լով հանդերձ՝ այս այլամերժ սկզբունքին
պատճառաւ՝ ընդհանուր մարդկութեան հա-
մար չկրցան ունենալ այն ազդեցութիւնը
զոր կարելի էր սպասել ասոնց միութենէն:
Երբ այդ ազգերէն մին, քաղաքական այլեւ-
այլ պարագաներու բերմամբ, անհետանար
պատմութեան էջերէն, իրեն հետ կը կոր-
սուէր նաեւ գրեթէ իւր ամբողջ քաղաքա-
կրթութիւնը, այնպէս որ Փիւնիկեցւոց ար-
հեստներէն, վաճառականութենէն եւ նաւա-
յին գիտութենէն քիչ մը բան միայն Յունաց
օգտակար եղաւ, որ ժառանգութիւն մը
ըլլալէ աւելի յաջորդութիւն մը եղաւ, այ-
սինքն թէ փոխանակ անոնց գիւտերէն օգ-
տուելու՝ անոնց անհետացմամբ՝ իրենք աս-
պարէզ գտնալով, ծաղկեցուցին նոյն ճիւղե-
րն, բայց բոլորովին նոր և տարբեր դրու-
թեամբ: Եգիպտացիք եւս որ այնքան հրա-
շալիքներ ձգած են ճարտարապետական ճիւ-
ղին մէջ և յաջողած բնագիտական, հաշուա-
կան և աստղաչափական գիտութեանց մէջ՝
չկրցան օգտուիլ Յունական փիլիսոփայու-
թենէ և գեղարուեստներէ, որոնք սակայն

այնքան սքանչելապէս պիտի պսակէին իրենց գիտութիւնները եւ զարգարէին մեծագործութիւնները, ինչպէս իրենք ալ ուրիշներու չհաղորդեցին իրենց գաղտնիքները՝ որոնց մասին հազիւ հատակոտոր տեղեկութիւններ միայն կարելի եղած է ձեռք բերել իրենց երկրին աւերակներէն:

Նոյնպէս Յոյներն որ իրենց Սոկրատես-րով, Պլատոններով, Արիստոտէլներով փիլի-սոփայութիւնը հասցուցին այնպիսի աստի-ճանի մը որ կրնանք ըսել թէ մարդկային մտքի վեհագոյն սահմաններուն հասան՝ բայց եւ այնպէս՝ իրենց գտած կամ գուշակած ճշմարտութիւնները չկրցան ամրապնդել հաս-տատ կռուանի մը վրայ, կռուան մը զոր այնչափ դիւրին պիտի ըլլար գտնալ Հրէից գրեանց մէջ:

Ահա ինչ որ եղած է հին աշխարհի վի-ճակը մինչեւ որ Հռովմէական կայսրութիւնն այլեւայլ ազգերու տիրելով եւ զանոնք ի մի ձուլելով՝ կերպով մը միութիւն յառաջ բե-րաւ, սակայն տակաւին նոյն սկզբունքը կը տիրէր, վասնզի Հռովմայեցւոց համար իսկ՝ իրենց իշխանութենէն դուրս գտնուող բոլոր ազգերն ալ հաւասարապէս բարբարոսներ կամ վայրենիներ էին. միայն թէ իրենց յաղ-թութեանց եւ աշխարհակալ տիրապետու-թեան արդիւնքն եղող գեղիսութեան երեսէն բոլորովին թուլնալով՝ չմերժեցին օգտուիլ ի-րենց գերի համարած ազգերու ծառայու-թիւններէն, եւ այդպէսով՝ կամաց կամաց՝ Հռովմէական հասարակութեան մէջ մուտք գտան այդ այլեւայլ ազգերու քաղաքակրթ-թութիւնները, կրօնքները, փիլիսոփայու-թիւնները, գիտութիւնները, արհեստները եւ այլ առաւելութիւնները, որով ազգերու տե-սակ մը բռնազրօսեալ միութիւն կամ լաւ եւս խառնուրդ մը յառաջ եկաւ, վասն զի այդ ամէն ազգերը՝ որ Հռովմայեցիներու կող-մէ հաւասարապէս կ'արձամարտէին, զիրար ա-տելէ չէին դադրեր, եւ գերութեան վէրքը աւելի լայնածաւալ համեմատութիւններ կ'առնուր:

Ահա այսպէս հին ազգաց մէջ ազգայնու-թեան չափազանցեալ գաղափարը մարդկային

ցեղին մէջ ուրիշ արդիւնք չունեցաւ եթէ ոչ թշնամութիւն, պատերազմ, կործանում, ա-ւերակ, եւ այսպէսով յարատեւ արգելք մը եղաւ յառաջադիմութեան:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- | | | | | | |
|----------|---|---|-----------|----|---|
| Նոյնմբեր | 2 | † | Կիր. աճ. | Ե. | գկնի Խաչին |
| | 3 | | Բշ. ապ. | | Ասեփանոսի Հռոմայ Հայ-
րապետին եւ Բահանայից եւ
Սարկաւազաց եւ ժողովրդոց
ոբք ընդ նմա կատարեցան: |
| | 4 | | Դշ. ղժ. | | Ակիփսիմեայ եպիսկոպոսի
եւ Յովսէփայ Բահանային
եւ Այիթալայ սարկաւազին
եւ Պրատնի վկային: |
| | 5 | | Դշ. ղժ. | | Պահոց: |
| | 6 | | Եշ. ղժ. | | Հայրապետացն Մեսրոփանո-
սի, Աղեփանդոսի Պողոսի
խոստովանողի եւ սրբոց
նօսարացն Մարկիանոսի եւ
Մարտիրոսի: |
| | 7 | | Ուրբ. գկ. | | Պահոց: |
| | 8 | | Շր. ղժ. | | Հրեշտակապետացն Գաբ-
րիէլի եւ Միքայէլի եւ ա-
մենայն երկնային զօրաց: |

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ս. Գրիգոր Նարեկացին ծնաւ 954ին, Վասպուրա-կանի մէջ, Հայրը, Մեծն խոսրով Անձեւացեաց եպիս-կոպոսը, առէն խնամք տարաւ անոր զարգացման: Մանուկ հասակէն զրկուեցաւ Նարեկայ Վանքը, ուր առարկայ եղաւ մասնաւոր հոգածութեան իր մօրը հօրեղբորը, Անանիոս վարդապետին, որ նոյն սրբավայ-րին առաջնորդն էր:

Շատ չտեցած Գրիգոր հիացուց զամէնքը իր հը-րեշտակային բարբովը եւ արտակարգ հանճարովը: Ա-նունը հռչակուեցաւ իսկոյն ամբողջ Հայաստանի մէջ. հայրապետները իշխանները եւ թագաւորներն անգամ սկսան զինքը պատուել:

Քաջանայ ձեռնագրուելէն քիչ վերջը, 977ին, Ան-ձեւացեաց Գուրգէն թագաւորին խնդրանքովը մեկ-նեց Սողոմոնի Երգ—երգոցը սքանչելի վարդապետու-թեամբ:

Սուրբը՝ Վահան Կաթողիկոսէն ըստ արժանւոյն տեղեկանալով Քաղկեդոնի սուրբ ժողովին ուղղու-թեան, ամէն կերպով ջանաց ազգին մէջէն բնաջինջ ընելու նոյն ժողովին մասին տարածուած մոլորական զրոյցները, եւ վերջ տալու նոյն պատճառով ազգին եւ

սւրիշ ուղղափառ քրիստոնեայ ժողովուրդներու միջև ծագած թշնամութիւններուն և ատելութիւններուն:

Մի քանի վատ և չարամիտ անձեր, երբ իմացան սուրբին այս վսեմ գաղափարը, զայրացան իրեն դէմ, և սկսան զինքը անուանել ծայր, այնինքն հաւատակորոյս կամ կրօնափոխ: Այս չափով ալ չչառացան. այլ Վահան Աթոռակոսին վախճանելէն վերջը անոպաներ հալածանք հանեցին իրեն դէմ և Անի քաղաքը երթալով ամբաստանեցին զինքը, և այնչափ ժխոր և ուզուել հանեցին որ քանի մը վարդապետներ և իշխաններ մէկտեղ գալով ժողով դուստրեցին որպէս զի քննութիւն կատարեն և եթէ Կ. Նարեկացին ուղիղ հաւատքէն խոտորած գտնեն աքսորել տան:

Յետոյ իրեն պատգամաւորներ զրկեցին, որպէս զի զինքը ժողովին առջեւ տանին, կամ իր ինչ մտքի տէր ըլլալը հասկնան և պատասխան բերեն:


Երբ պատգամաւորները հասան, Սուրբը անոնց միտքը գիտնալով, զիրենք սիրով ընդունեցաւ, և սեղանի հրաւիրեց: Սեղանին վրայ բերել տուաւ խորոված աղաւնիներ. օրը ուրբաթ էր: Պատգամաւորները աղաւնիները տեսնելով աւելի եւս գայթակղեցան եւ ըսին. Վարդապետ միթէ այսօր ուրբաթ չէ: Այն ատեն Սուրբը չգիտնալ ձեւացնելով՝ ներում խնդրեց: Ապա խորոված աղաւնիներուն դառնալով ըսաւ. Ելէ՛ք գացէ՛ք ասկէ, որովհետեւ այսօր պահք է: Նոյն հետոյն խորոված աղաւնիները թեւ առին եւ ամենուն առջեւ թռան գացին անկէ: Պատգամաւորները առ որ տեսան ահաբեկ եղան. և Սուրբին ոտքը իյնալով թողութիւն խնդրեցին: Եւ ելան գացին զիրենք զրկողներուն քով և ամէնուն պատմեցին տեսածնին և միանգամայն Սուրբին սքանչելի քաղաքաւարութիւնը և աստուածաշնորհ վարդապետութիւնը: Ժողովականները այս բանս լսելով զարմացան եւ Սուրբին գէմ չարախօսութիւն ընող վատերը պատժեցին:

Ս. Գրիգոր սրբութեան մէջ օրէ օր յառաջ գնաց: Գիշեր ցորեկ աղօթքով և ընթերցումով կը զբաղէր, և ինքզինքը տուած էր ամբողջովին աստուածային խո. կուսներու: Արժանի եղաւ մարմնաւոր աչքով տեսնելու Ս. Կոյսը՝ Յիսուսը գրկած: Յօրինեց Նարեկ աղօթաբարբը, որ քրիստոնէական զգացման և մտածման ամենէն հզօր գրական արտաբերութիւնն է, և որով Գրիգոր բանաստեղծներու շարքերուն մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէ: Այս գիրքը աւարտեցաւ 4002ին: Գրիգոր շարագրեց նաև վեհամասն ճառեր, ներբողներ, գանձեր, և մեղեդիներ: Մեկնեց Յօրայ Ո՛վ է դան: Անպայման սէր մը ունէր նկատմամբ Ս. Աստուածածնի, ինչպէս ակնհայտ կը տեսնուի անոր վրայ յօրինած զբանչելի ներբողին մէջ:

Վախճանեցաւ 4003ին, և թաղուեցաւ Նարեկայ վանքին մէջ, Ս. Սանդուխտի եկեղեցւոյն մօտ:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԲԻՒՏՈՍՈՒՒ՝ ԳՐԲԷՆ



Կ.Ի.Մ. Ա.—Դ.Լ. ԺԵ.—Ի սիրոյ կատարուած գործոց վրայ:

Աշխարհիս ոչ մէկ բանիկ համար եւ ոչ մէկ մարդու սիրոյն համար՝ յար բան մը ընելու չէ, սակայն կատարելի մը օգտին համար երբեմն ազատեմն պիտի գտնուի ընել թաղի գործ մը, կամ նաեւ շաւաղոյն գործոյ մը հետ փոխանակել:

Բանգի այսպէսով թաղի գործ մը յոյնացան, հապա աւելի աղէկի կը փոխուի:


Առանց սիրոյ արտաքին գործ մը ընալ օգտն չունի. իսկ ի՞նչ որ ի սիրոյ կը գործուի, որչափ ալ փոքր ու անարգ ըլլայ, ամբողջովին արդիւնաւոր կ'ըլլայ:

Որովհետեւ Աստուած կը կշռէ այն դիւանորոշիւնը որով մէկը կը գործէ, քան զործն իսկ զոր կատարէ:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)



Բ. ԱՐԱՐ. Ա. ՏԵՍԱՐԱՆ

Համան, Հիդասպ

Համան

Ո՛չ, կեղծիքն ակներեւ առջեւդ հարկ է պարզել:

Կրցա՛յ ճակատագրին ուղղել ընթացքն անիրաւ:

Մատաղ հասակէս Պարսիկներու ձեռքն ինկած՝

(*) Տե՛ս ԹԷ՛ւ 446, էջ 663

Կը վարեմ պետութիւնն, ուր ատենօք գնուեցայ .
 Ճոխութիւնս՝ արքայից փարթաւութեան կը հասնի .
 Շրջապատուած զաւակներէս, որ զօրութեանս նեցուկ էն,
 Միայն արքունական թագը պակաս է ճակտիս .
 Եւ սակայն (մահկանացուաց աղէտալի՛ կուրութիւն) .
 Այսքան անթիւ պատիւներու հեշտին վայելքն անցաւոր՝
 Սիրտըս հազիւ թեթեւակի, հարեւանցի կը գգածէ .
 Բայց Մուրթքէն պալատին դըրան առջեւ կանգ առած՝
 Սա սիրտը տառապեալ բիւր նետերով կը խոցէ .
 Եւ բոլոր մեծութիւնս ինձ անախորժ կը թուի,
 Յորքան արեւն այդ վատոգի նենգաւորին լոյս կու տայ :

Հիդասպ

Տասն օրէն, բոլորովին կը զերծանիք իր տեսքէն,
 Ազգն ամբողջ գիշատիչ գաղանաց կեր պիտի ըլլայ :

Համան

Տասն օր, ահ, ինծի երկար, կարի երկար կը թուի .
 Ինքն է, գաղտնիքը վրժիս կ'ուզեմ քեզի հաւատալ .
 Ինքն է, որ մերժելով գըլուխ ծըռել իմ առջեւս,
 Մասնեց զսնունք այն բազուկին որով պիտի հարուածուին .
 Գիշ էր, այդօրինակ զոհ մը, չա՛տ քիչ էր ինծի .
 Նոր ոճիրներ կը յաջորդեն կարի թեթեւ վրէժծին .
 Համանին նըման մարդիկ, մէկն որ գրդոել յանդգնի,
 Իրենց արդար բարկութենէն, ի՛նչ ալ ընեն հերիք չէ .
 Պէտք են տիեզերք թնդացնող պատիժներ .
 Թշնամանքը պատիժին բազդատելով թող սարսին .
 Ազգեր միահամուռ թո՛ղ արեան մէջ ընկղմին .
 Ըտուի թող ապագայ սարսափահար դարերուն .
 Կային Հրէաներ, կար ազգ մը ժանտ լրբենի .
 Սփռւած ամենուրեք, երկիրս ամբողջ կը ծածկէր .
 Անոնցմէ՞ մին յանդգնեցաւ յուզել ցասումն Համանի .
 Անմիջապէս ամէնքն եղան անհետ երկրիս երեսէն :

Հիդասպ

Ուստի, Տէր իմ, Ամաղէկի շարեան ներքին ձայնը չէ՞
 Որ զիրենք ջնջելու կը մղէ զքեզ գաղտնաբար :

Համան

Գիտեմ թէ սերած այդ տարաբախտիկ արիւնէն
 Անկ էր ինծի զինուիլ անվերջ ատելութեամբ իրենց դէմ .
 Ամաղէկը մատնեցին խժոժական ջարդերու .
 Նոյն իսկ հօտերն եղան անոնց կատաղութեան նշաւակ,
 Լոկ աննշան մաս մը կըրցաւ կոտորածէ զերծանիլ .
 Բայց, հաւատա՛ սա պատուին մէջ ուր բարձրացած եմ հիմա
 Հոգիս մեծութեանս յարած փարած բընաւին ,

Արեան շահերուն այնքան արժէք չընծայեր,
Մուրթ քէն յանցաւոր է. այլ եւս ուրիշ ի՞նչ պէտք է:
Ուստի Արտաշէսն անոնց դէմ ե՛ս գրգռեցի,
Հիւսեցի բարուրանքներ, զրպարտութիւնն զինեցի,
Ըսի. փառքդ է վըտանգի մէջ. կեանքին մասին սոսկաց ան:
Յոյց տուի զանոնք հըզօր ըմբոստամիտ և փարթամ
Իրենց Աստուածն ալ թշնամի՝ ուրիշ ամէն աստուածոց:
Մինչև երբ թոյլ պիտի տրուի որ այդ վատթար ցեղն ապրի:
Եւ պի՛ղծ պաշտամունքով ապականէ պետութիւնդ:
Պարսից մէջ օտարական, մեր օրէնքին դիմադիր.
Ուրիշ մարդոցմէ տարանջատուած կը թըլին.
Մեր վայելած անդորրութիւնն ամբոխելու կը ջանան:
Եւ ասուած ամէն մարդէ, կ'ատեն իսպառ ամէն մարդ.
Անոնց ժպիւրհ ճիգերն ամբողջ հապա՛ փութա՛ պատժելու,
Թո՛ղ ճոխանան գանձերդ անոնց մեծափարթամ աւարով.
Ըսի. և թագաւորն ինծի հաւտաց և իսկոյն
Իր գերագոյն իշխանութեան կնիքը ձեռքս տուաւ:
«Ապահովէ՛, ըսաւ ինծի, անդորրութիւնն արքայիդ,
Գնա՛, ջարդէ՛ այդ թշուառներն անոնց աւարը քեզի՛»
Ազգն ամբողջ այսպէս անա մատնըւեցաւ կորստեան:
Իրեն հետ որոշեցի կոտորածին օրն ու ժամ:
Սակայն յետաձգումն այս դրուժանին սատակման՝
Իր արեան ծարաւահիւծ սիրտըս վշտով կը լլկէ.
Ձեմգիտեր ի՞նչ խռովութիւն թոյն կը խառնէ հրճուանքիս:
Ինչո՞ւ համար դեռ տաան օր հարկ է որ ես զինքը տեսնեմ:

Հիդասսպ

Մէկ խօսքով կարող չե՛ս զինքը մատնել սատակման.
Ըսէ՛, Տէ՛ր, թագաւորին որ զանիկայ քեզի տայ:

Համան

Եկած եմ քարեպատեն առիթ մը ձեռք ձգելու.
Դուն ալ ինծի պէս կը ճանչնաս այդ թագաւորն անողորմ,
Տեղեակ ես ո՛րչափ անպամ իր անակընկալ զայրոյթով
Մեր բոլոր խորհուրդներուն մղանակներն է փշրեր:
Բայց սակայն կը տանջըւիմ ես աւելորդ երկիւղով,
Անոր առջեւ Մուրթ քէն անարգ և ըստորին մարդ մըն է:

Հիդասսպ

Ինչո՞ւ կը յապաղես, գնա՛ կանգնել տուր փութով
Իրեն սատակման գործիքն անարգ, խայտառակ:

Համան

Ես կ'երթամ, ազմուկ մը կայ: Թէ որ արքան կոչէ զիս...

Հիդասսպ

Բաւական է:

Բ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Արսաւես, Հիդասպ, Ասափ, Հետեւորդք Արսաշեսի

Արսաւես

Առանց այդ հաւատարիմ խորհուրդին
Ուրեմն երկու դաւողք արքան կը սպաննէին մահճին մէջ :
Մինա՛կ թողուցէք զիս . Ասափ միայն մնա՛յ հոս :

Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Արսաւես. Ասափ

Արսաւես, նստած իր գահին վրայ

Կ'ուզեմ խոստովանիլ . այդ դրրութեան վատ զոյգին
Դրեթէ մտքէս ելած էր դաւն անագորոյն, հայրասպան .
Դաւկահար եղայ երկու անգամ ի լուր այդ վէպին,
Որ պարզեց պահ մը առաջ անոր պատկերն իմ առջեւ :
Կը տեսնեմ ի՜նչ արդիւնք անոնց կատաղութիւնն ունեցաւ .
Խիստ տանջանքներով իրենց հոգին փչեցին :
Բայց այն ծառան հաւատարիմ, որ աչքերով կոյովի
Անոնց սեւ դաւադրութեան մանուածքն հանեց երեւան,
Որ ինծի ցոյց տուաւ անոնց ձեռքը վըրա թարծրացած,
Որով Պարսկաստան ազատեցաւ ինծի հետ,
Հաւատարիմ ընթացքին տեղ ի՜նչ պատիւ ի՜նչ վարձք առաւ :

Ասափ

Շատ խոստումներ եղան իրեն . ուրիշ բանի տեղեակ չեմ :

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ԱԼՔՈՒԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ
ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՎՐԱՅ

Գերման կառավարութեան խնդրանքով,
գիտուններու յանձնախումբ մը մանրախոյզ
քննութիւններէ յետոյ կազմեց համեմատա-
կան ցուցակ մը, ուր կը տեսնուին ալքոլա-
մոլներու և չափաւոր խմողներու զաւակնե-
րուն միջեւ եղած տարբերութիւնները :

Գերման գիտունները իրենց քննութիւն-
ներէն կը հետեւեցնեն թէ ալքոլամոլներուն
զաւակներուն հարիւրին քառասուններեքը
կը մեռնի, մէկ ամսուան չնդած, մինչդեռ
չափաւոր խմողներուն զաւակներուն հարիւ-

րին ութը միայն նոյն միջոցին կը մեռնին :
Ալքոլամոլներու զաւակներուն հարիւրին ծը
ապուշ կ'ըլլան . իսկ չափաւորներու զաւակ-
ներուն մէջ ապուշ բնաւ չէ տեսնուած :

Ալքոլամոլներու զաւակներուն հարիւրին
ծը լուսնոտ կ'ըլլան, և ծը գանձած, Ժողով-
կալ ընտանեաց մէջ այս դէպքերը տեղի
չունին :

Վերջապէս ալքոլամոլներու զաւակներուն
հարիւրին 17ը հազիւ իմացական զարգացում
կ'առնուն, իսկ ժուգկալներուն 81ը : Այսօ-
րինակ թուարկութենէ մը վերջը աւելորդ է
ըսել թէ չարաչար խմող ազգերու մէջ ինչ
սոսկալի աղէտներ կը պատճառէ ալլոյր մի-
բանի տարուան մէջ :

ՊԱՂԼԵՂԻ ԼԵՌ ՄԸ

Միացեալ-Նահանգներուն մէջ, ժիլա գետակին եզերքը, Նոր-Մեքսիկոյի հարաւային արեւմտեան կողմը, գտնուած է իսկական պաղլեղի (alun) լեռ մը։ Այս արտակարգ զանգուածը կը ծածկէ երեք քառակուսի քիլոմէր մակերեւոյթ մը և շրջակայ վայրերէն միջին հաշուով երեք հարիւր մէգր բարձր է։

Տեղւոյն վրայ քննութիւն կատարող յանձնախումբին տեղեկագրին համեմատ, այս մթերքը այնքան զուտ և մաքուր է որ իրեն հաւասարը զփուար է գտնել վաճառողներու քով։ Ասկէ ժողովուած պաղլեղը իր բնական վիճակին մէջ կրնայ գործածուիլ շատ մը պիտոյքներու։ Մի քանի խոշոր զանգուածները լուծելու նպատակաւ շինուելիք գործանոցներու համար բնութիւնը կարծես կանխահոգութեամբ զետեղեր է այս լեռան մօտերը հանքածուխի անագին և գետնի հաւասար խաւ մը։ Մինչեւ հիմայ Միացեալ-Նահանգաց բնապաղլեղը (aluminium) կ'արտադրուի արզնամետաղէն (bauxite) զոր հարկ է փոխադրել մինչեւ Նիակարայի լուծարանները։

Յանձնախումբը կը համարի թէ այլեւս հարկ պիտի չըլլայ պեղումներ ընել գրեթէ անսպառ զուտ պաղլեղ գտնելու համար։ Կը պնդէ թէ հարկ է ըստ կարի փութով այս հանքը բանեցնելու ձեռնարկել, քանի որ տարուէ տարի բնապաղլեղի կիրառութիւնը մեծ համեմատութիւններ կ'առնու։ Ամէնքը շահ ունին այս բանին մէջ. արհեստաւորը, որ պիտի կարենայ շատ աժան գնով առնուլ այս մետաղը, բանուորները որոնց շահատան մը պիտի ըլլան այս պաղլեղի լեռը և քովի հանքածուխի խաւերը. դրամագլուխի տէրերը, որոնք հոս մեծապէս պիտի կարենան օգտագործել իրենց զրամը։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԶԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՆԳՂԻՈՅ ՄԷՅ

Կաթողիկէ Ճշմարտութեան Ընկերութիւնը 29 տարիէ ի վեր գոյութիւն ունի իր ներկայ հանգամանքովը։ Վերջին կէս

դարու ընթացքին մէջ նմանօրինակ ձեռնարկներ շատ փորձուեցան բայց չյաջողեցան։ Այս ընկերութիւնը իր բարգաւաճումը կը պարտի իր հիմնադրին Մ. Ճէյմս Պրիդդընի իմաստութեան։ Ճէյմս Պրիդդըն բազմակողմանի հմտութիւններով և ծաւալուն յարաբերութիւններով ճոխացած անկլիզան աշխարհական մըն էր։ Ասիկայ խոր համոզմամբ կաթողիկէութիւնը ընդդրեց և անհրաժեշտ պէտք մը զգալով Անգլիոյ մէջ Կաթողիկէ սկզբունքները ծաւալելու պաշտօն ունեցող ընկերութեան մը, սկսաւ աշխատիլ։ Յայտնեց իր գաղափարը շատ քահանաներու և աշխարհականներու, շահեցաւ զանոնք, քաջալերեց, և անոնց հետ կազմեց միութիւն մը որ 1885ին հետեւեալ յայտարարութիւնը հրատարակեց, ուր կը պարզուի ընկերութեան նպատակը.

1. Աժան գնով ծաւալել Կաթողիկէից մէջ ջերմեռանդական փոքր գիրքեր։

2. Օգնել անուս աղքատներուն որ իրենց կրօնական կրթութիւնը կատարելագործեն։

3. Տարածել բողոքողաց մէջ Կաթողիկէ ճեմարտութեան վերաբերեալ տեղեկութիւններ։

4. Կաթողիկէ ժողովրդական երկասիրութեանց աժան գնով հրատարակուելուն և տարածուելուն նպաստել։

Ընկերութեան իւրաքանչիւր անդամը տարին 10 չիլինկ կը վճարէ։ Հեղինակները քիչ բացառութեամբ իրենց աջակցութիւնը կ'ընծայեն ձրիաբար՝ նկատելով այս ձեռնարկը ընկերսիրութեան ամենէն ընտիր կերպ մը։

Ընկերութիւնը շատ շուտով յառաջ գնաց։ Հիմայ իր տարեկան եկամուտը 4500 ոսկի է։ Այս գումարը յիշաւի գոհացուցիչ է, բայց չափազանց չէ, նկատելով ընկերութեան նպատակին կարեւորութիւնը և անոր գործունէութեան շրջանին ընդարձակութիւնը։

Մէկ բենիի տետրակներուն յաջողութիւնը ամէն վիճակագրութենէ աւելի ցոյց կու տայ ընկերութեան յաջողութիւնը։ 900ի չափ այս տեսակ տետրակներ հրատարակ

ուած են: Ասոնք ամէն տեսակ նիւթեր կը պարունակեն, Աւետարանի և հին կտակարանի տպագրութիւններէն սկսեալ մինչև յետին հակակաթողիկէ առասպելները, մինչև նորագոյն տեսութիւնները ընկերական հարցերու:

Ջերմնաւորական գրքերուն մէջ Պարզ Աղօթագիրքէն տպուած է 1,700,000 օրինակ: Մտածականի գրքերէն, մէկ բէնի արժէքով, ծախուած է 900,000 օրինակ. աւետարաններէ՝ 150,000. վերջապէս ասոնցմէ զատ ուրիշ ջերմնաւորական գիրքերէն ծախուած է 1,400,000 օրինակ: Սուրբերու կամ մեծ Կաթողիկէներու (Բասթէօրի, Լարբարանի, Սէքքիի, Կալվանի պէս գիտուններն ալ մէջը հաշուելով) կենսագրութիւններէն ծախուած է 2,000,000 օրինակ: Ս. Ոորհրդոյ և ընկերութեան վերաբերեալ ընտիր պատմութիւններ պարունակող գիրքերէն ծախուած է 2,000,000 օրինակ: Վերջին հրատարակութիւնը եղած է շարք մը 38 հատորներու կրօններու պատմութեան վրայ: Հեղինակներուն մէջ կը գտնուին աստուածաբան, իմաստասէր, հնախօս, մեծամեծ գիտուններ:

Բողոքող երկրի մը մէջ Կաթողիկէները ստիպուած են ինքզինքնին պաշտպանել կաթողիկոսութիւնը հարուածող պարսաւատեորերու դէմ: Այս մասին գրուած հարկերաւոր գրքերոյնք միլիոններով ծախուեր են:

Արժան է հարեւանցի յիշել երկու փոքր գիրքեր, որոնց առաջինն է Առաջնորդ երկնից, աղօթագիրք նաւասեաց որ Կաթողիկէ նաւաստիներու համար բնդունուած է ծովակալութեան՝ կողմէ: Երկրորդն է Աղօթագիրք Կաթողիկէ Պոլ-Սփառքներու զոր վերջերս յօրինեց Պիւղ Գերապայծառը, Գամպիզօպոսոյ Եպիսկոպոսը՝ համապատասխանելով հետզհետէ աւելցող խնդրանքներու: Գոյրերու համար ալ յատուկ գրքով գիրքեր հրատարակուեր են: Ընկերութեան հրատարակութիւնները կը վաճառուին՝ շատ ժողովրդապետական եկեղեցիներու զբան մօտ: Ընկերութեան պաշտօնաթերթը ընտիր ամ-

սաթերթ մըն է Catholic Book Notes անունով որ կը վաճառուի մէկ բէնիի:

Ասոր պէս ընկերութիւններ հիմնուած են Սկովտիոյ, Իռլանտայի, Ամերիկայի, Աւստրալիոյ մէջ: Անգղիայիս գաղթականութեանց շատերուն մէջ այս ընկերութիւնը գործակալներ ունի:

ԳԱԹՈՒԼԻԲ ՄԷՉԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

(Տեւամի)

— Ալլան պիղիմ իլէ մէշղուլ օլմուշ օլսայտը, հիշ տիւնեատա կիւնահ պուլունըրմը իտի:

— Էվլէթ պուլունըրտը, չիւնքի կիւնահըն սէպէպի Ալլան տէյիլ տիր. պիլ աքիս, Ալլան կիւնահտան իքրան էտէր վէ ընը թէճգիյէ էյլէր: Փագաթ Ալլան, ինսանըն իրատէթի ճիւզիյէսինէ ըիայէթ իթմէք վէ շէրրտէն խայր իսթիսալ էյլէմէք իչուն կիւնահա միւսաատէ իտէր:

Կիւնահըն սէպէպի Ալլան տէյիլ տիր. չիւնքի Ալլան պիլի հիւրը եարաթմըշ տըր, պու իսէ պիր լութֆ տըր, խայր տըր, էյիլիք տիր. հալպու քի կիւնահ իսէ, հիւրիյէթիմիլի սույի իսթիմալի տիր, վէ իլթէ պու սույի իսթիմալ շէրր տիր, պիր ֆէնալըգ տըր: Հիւրիյէթ Ալլանտան կէլիլ, սույի իսթիմալ իսէ ինսանտան սատըր օլուր: Կիւնահ, ինսանա ինսան օլունմըշ օլան հուրիյէթին նէթիճէսի տիր:

Ալլան, տարը ախրէթտէ հէր քէսի թէթվիճ էյլէմէք իչուն պու տիւնեատէ պիւթիւն ինսանլարը ֆաղիլէթէ տալէթ իտէր. ֆագաթ քէնտի խըտմէթինտէ պուլունանլարըն հիւնի իսթիյարլարըյլա օ խըտմէթի գապուլ էյլէմէլէրինի իսթէր. պու սէպէպտէն տէ, քէնտի խըտմէթին գապուլ էյլէմէմէք միւմքին օլմասընա միւսաատէ էյլէր քի, իշթէ Ալլանըն խըտմէթին գապուլտան իսթիւնա էթմէք, կիւնահ իչլէմէք տէմէք տիր:

Էվլէթ, Ալլան պիղէ հուրիյէթ վէրմիշ

* Տես թիւ 444, էջ 620

օլմագոս , կիւնահ տա օլմայաճագ տը . ֆա-
գաթ հիւրրիյէթի գալտըրտըղըմըզ կիպի , ար-
թըզ սէվապ վէ էճը տէ գալմագ : Ալլահ ի-
չին , հիւնսի իխթիյարըլլա ծնա խըտմէթ
իտէն կիօնիլլիլէր , պիր գուվվէթի զայրը
միւմթէնիա թարաֆընտան սէվզ օլլընան մա-
ֆիմալարսան տահա իւթիւն տիրլէր , տահա
չէրէֆի տիրլէր . « Ինսանը , ֆէնա օլմագտան
մէն իթմէք իսթէմէք , ծնը եայընըզ հիսսի
թապիիյէ թապի էլլէմէք , պէհիմէ հալինէ կէ-
թիրմէք տէմէք տիր » : Խայըր , Ալլահ ինսանը
էյի վէ պախթիյար օլմագ իչուն հիւրը եա-
րաթմըչ տըր :

Հէմ տէ , Ալլահ կիւնահա , ծնտան տահա
պէօյիւք պիր էյիլիք չըգարմագ իչուն միւ-
սաստէ իտէր . նասըլ քի սկզբնական կիւ-
նահա , ծնը Մարդեղուլիւն վասիթասըլլա
թէլաֆի իթմէք իչուն , վէ եէնուտիլէրին ,
էֆէնտիմիզ Յիսուս Քրիստոսա էզիյէթ իթ-
մէլէրինէ , տիւնեանըն օ վասիթալլա սէլա-
մէթ պուլմասը իչուն միւսաստէ էլլէմիչ
տիր :

Յագաթ Ալլահըն կիւնահսան իսթիհաչ էյի-
թիյի էյիլիֆ նէ՝ իր :—

1 . Կիւնահը քէնտի մէգաուտը իւանիյէ-
սինէ խըտմէթ իթտիրմէք :— 2 . Կիւնահքեա-
րը քէնտիսինէ տավէթ իթմէքլէ լուքՅընը ,
ծնա աֆվ իթմէքլէ մէրհամքիմի վէ ծնըն
ճիւրմ ու գապահաթլարընըն ճէգասընը վէր-
մէքլէ քէնտի աջալէքիմի կէօսթէրմէք :— 3 .
Կիւնահքեարըն թէվպէյէ կիլմէսինտէ , Ալլա-
հա գարչը եարմըչ օլտուղը հագարէթին ին-
թիգամընը պիզգաթ քէնտի քէնտիսինտէն
ալմասը , հիւնսի իխթիյարըլլա իլթիգամ էյ-
լէտիյի ասարը իսթիլֆար վէ թէվազու ու
մահվիյէթ , վէ չօզ տէֆա տա կիւնահքեարըն
պու սուրէթլէ թէվպէյէ կէլտիքտէն սօնրա
իւլահը նէֆա էլլէմէսի , ֆագիլէթ պապընտա
սապիթգատէմ օլմասը տըր :

Յեւալարըն միւվէֆֆագիյէր ու իզպալը ,
էյիլէրին սէ մեզալիլ ու իսպարը գուսթէրի ի-
շահիյէնիմ վար օլմասըղընա սեյիլէր սեյիլէր
մի :

— Խայըր , հիչ ասլա պուլնլար գուտրէթի
իւանիյէ վար օլմասըղընը իսպաթ իտէմէզլէր :

չիւնքի սուրէթը մութլագատա պիւթիւն
ֆէնա քիմսէլէրին իզպալտա վէ էյիլէրին հէր
վագըթ իտպարտա օլտուղը սահիհ տէյիլ տիր :
Ալէսաէվիյէ պու տիւնեանըն միւվէֆֆագի-
յէթլէրի տէ , ատէմի միւվէֆֆագիյէթլէրի
տէ էյիլէր վէ ֆէնալար հագղընտա սէյանէն
ճարի տիր :

Պուլնտան սարֆը նագար , էօմրիւնտէ
հիչ պիր էյիլիք եարմամըչ օլմագ գատար
պիր ֆէնա քիմսէ թէսավվուր իտիլէմէզ .
իլթէ պու կիպիլէրին կիւնահընը օ ճէհէնէմ-
տէ թէճզիյէ էթմէք ճիհէթինի քէնտիսինէ
մուհաֆագա էլլէմէք իւզրէ , ծէնապը Հագգ
ծնլարա պու տիւնեատէ տիւնեալի միւվէֆ-
ֆագիյէթլէր վէրիր : Բէզալիք հէր տիւրլի-
խաթա շայիպէսինտէն քեամիլէն միւպէրրա
օլմագ գատար սալիհ քիմսէ տէ պուլնա-
մասըղընտան , ծէնապը Ալլահ պու կիպիլէ-
րին ֆագիլէթլէրինի սէմատա միւքեաֆաթ-
լամագ ճիհէթինի քէնտիսինէ մուհաֆագա
իթմէք իւզրէ , ծնլարըն գուսուրլարընա ճէ-
զահն պու տիւնեատէ զահմէթ չէքտիրիր :

Կիւնահքեարլար հալը իզպալտա պու-
լընմալարընըն սէպէպի միւնէթտարլըզ վա-
սիթասըլլա Ալլահըն ծնլարը քէնտիսինէ ճէլպ
էլլէմէք իսթէմէսի , վէ եախօտ օ պիչարէ-
լէր էպէտիյէն մուագզապ օլմագալարընտան ,
հիչ տէյիլսէ եարմըչ օլտըզալըր ճիւզի խայ-
րըն միւքեաֆաթլընը պու տիւնեատէ վէր-
մէք արզու էլլէմէսի տիր : Մա մաֆիյ , չէք-
լիք վէրէն վէ Քիլիսայա գարօը Յեւալըզ
եալան կիւնահքեարլարըն իպրէթի ալէմ
օլմագ գատար աղըր սուրէթտէ պու տիւն-
եատէ տախի ճէզա կէօրմէլէրի նատիրաթ-
տան տէյիլ տիր :

Իզպալտէ պուլընան սալիլէր տէ աղ
տէյիլ տիրլէր . ֆագաթ պուլնլարընտա միհնէթ
ու մէշագգաթլարը վար տըր , չիւնքի պու
տիւնեատէքի միհնէթ ու մէշագգաթ

1 . Սալիլէրին գալպլէրինի պիլճիւմլէ
եալանճը վէ ալտատընը էյիլիքլէրտէն ալըր-
մագ ,

2 . Անլէրի , քէնտի քէնտիլէրինէ կէլէ-
րէք , տահա ֆագիլ վէ տահա զիյատէ թէք-
միլ օլմագա ուլանտըրմագ ,

3. Անլէրէ զիյատէ սէվապ գազանտըր-
մագլա, տահա պէօյլէք պիր սասատէթի է-
պէտիլէյէ մագհար էյլէմէք,

4. Անլէրի, սէչիլմիլլէրին նիւմունէսի
օլան Յիսուս Գրիստոսա տահա զիյատէ միւ-
շապիհ գըլմագ,

5. Օնլարըն, Ալլահըն սատալէթինէ գար-
շը օլան կիւնահլարընը, պու տիւնեատէ քու-
ւարանտան տահա ազ գահմէթլէ էստէնի-
լիր օլտուգլարընտան, պու տիւնեատէ ափլ
իթտիրմէք մագսաարնա մէպնի տիր:

Պունտան պաշգա, սալիհ պիր քիմնէ
գահմէթ պիլէ չէքսէ, եինէ րահաթ տըր,
պախթիյար տըր, չիւնքի սէլամիթի գալպէ
մալիք տիր. հալպու քի կիւնահլար, իզ-
թիրապը վիճտանը վէ էսիրի պուլլընտըր հէ-
վալը նէֆասնիսի սէպէպիլլէ տայիմա սիհու-
զուր տըր:

(Մապաշի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Հոկտ. 27ին Լիւնի մէջ Արհի. Հէկտոր-Իրենէ Աը-
վէն Սըքեպիսկոպոսին նախագահութեամբ գումար-
ուեցաւ Կաթողիկէ իրաւագէտ-փաստաբաններու Լէ-
Համաթողմը՝ նիւթ ունեւորով Եկեղեցւոյ եւ Պետու-
թեան միջեւ եղած յարաբերութիւնները: Այս առթիւ
Վսեմ. Մէրի տէլ Վալ Կարդինալը կանխաւ Սըվէն
Գերապոյծառնի յայտնեց Ս. Հօր գոհունակութիւնը
և անոր յանձնարարութիւնները:

«Այսքան ծանրակշիռ նիւթի մը ուսումնասի-
րութեան և վիճարանութեան համար, կ'ըսէ
Վսեմ. Կարդինալը, Կաթողիկէ իրաւագէտները
քահանայապետական հրահանգներու մէջ պիտի գըտ-
նեն բաղձոցուած ապահովութեամբ և պայծառու-
թեամբ գծուած շաւիղը: Ուստի յաւ կ'ընեն եթէ
հետեւին հաւատարմաբար Լէւոն Ժ. Գ. անմահ Շըր-
ջաբերականներուն մէջ պարզուած վարդապետու-
թեան. իսկ վերջերս Ֆրանսայի մէջ տեղի ունեցած
դէպքերուն մասին՝ յատկապէս պիտի հետեւին Պիոս
Ժ. Ս. Քահանայապետին իմաստուն որոշողութեանց:»

* Ս. Քահանայապետ Ս. Գամատտի բակին մէջ
ընդունեցաւ Լոնկրոտքի, Ֆռանչոնիթէի, Սարինտոյի
ուխտաւորները: Ս. Հօր քովն էին Պըզանտի, Գար-
գաստի, Լուկանոյի և Թրիպիի եպիսկոպոսները:

Ուխտաւորները երեք հազարի չափ կային: Երբ
Պիոս Ժ. երեցաւ պատշգամբ, ամենքը ծափահարե-
ցին:

Քահանայապետական օրհնութիւնէն ետքը Ֆրան-
սոցի ուխտաւորները հնչեցուցին Կաթողիկէական երգ-
իք, որուն մինչեւ վերջը ունկնդրեց Ս. Քահանայա-
պետը:

* Թէոգոր Բադգոքի անունով Կաթողիկէ
բարերար մը Նամնաւի Սուրբ-Յովհաննէս-Աստուծոյ
ըսուած Եղբարց կտակեր է իր ամբողջ ստացուածնե-
րը, պայման դնելով որ անոնցմով կառուցուի մանկա-
նոց մը խեղանդամ և անբժշկելի աղոց համար:

Մանկանոցին շէնքը կը գրաւէ 2000 քառակուսի
մէդրի չափ տեղ մը, որուն համար հարկ եղած է
ծախսել իբր 650,000 ֆրանգ:

Մանկանոցին օրհնութիւնը կատարուեցաւ
Պրեպուրի Իշխան-Եպիսկոպոս Վսեմ. Կարդինալ
Գօրի կողմէ, որ արարողութիւնէն վերջը ըստխօսու-
թիւն մը քրաւ, որմէ կը քաղինք հետեւեալը:

«Մանկանոցը՝ քրիստոնէական սիրոյն կոնգրատ
օթեւանն է: Համբ քողոք մըն է ան ընդգէմ տնձա-
սիրութեան տշխարհի, որ հաւատքը կրուսեր է:
Աւսող, հեազհետէ կը բաշմանան այն ձայները որ
կ'ուրանան. կ'անարգեն, կը ծաղրեն մարդկային ար-
ժանապատուութիւնը: Մոլորութիւնը այնչափ յա-
ռաջ գացեր է որ մարդը կ'որակեն իբրեւ աստուծոյ
կենդանեաց առաջինը: Կը համարձակին ըսելու որ
այն թշուառ էակները որ մարդկութեան չեն կրնար
ծառայել, ընկերութեան առողջ գարգացման ար-
գելք են: Կ'ուրանան այսպիսիներուն գոյութեան ի-
րաւունքը. այո՛, մինչեւ հոս հասեր են Կարելիք է որ
այս այսպէս շարունակուի: Ոչ, մենք երբեք տեղի
պիտի չտանք այսպիսի հարցերու առջեւ: Այս ման-
կանոցը ամենէն ուժգին բողոքն է այդօրինակ տե-
սութիւններու դէմ: Հոս կ'իշխեն Յիսուս և իր աշա-
կերանները, որ կը պաշտպանեն իրենց զիմորները:
Քրիստոնէական սէրը կը նկատէ այս թշուառ անդա-
մարյանները իբրեւ եղբայր, իբրեւ զաւակ աստու-
ծային: Հօր և տանց կը ծառայէ Յիսուսի Քրիստոսի
սիրոյն համար:»

* Խառլոյ իւր ընտրութեանց պայքարին մէջ՝ Կա-
թողիկէից ձեռնպահ գիրքը կը շարունակուի Կաթո-
ղիկէները ներկայ պայմաններու մէջ, գործադրել իք
քաղաքական որոշ ծրագիր մը չունին, որովհետեւ
խորհրդարանական կուսակցութիւն մը չեն, չեն փա-
փաքիր բլլալ և չեն ալ կրնար փափաքիլ. ուստի
և այրելայ քաղաքական կուսակցութեանց պէս
ընտրութեանց մասնակցելու շարժառիթ չունին:
Իրենք միայն և պարզապէս կը ջանան յաւելու անուղ-
ղակի քան ուղղակի միջոցներով, պաշտպանել կրո-
նական, բարոյական և ընկերական գերագոյն շահերը
Եկեղեցւոյ, հայրենիքի, ընտանիքի, ընկերութեան,
այն հայրենի ժառանգութեան, վերջապէս գաղա-
փարներու, զգայութեան, սիրոյ և աւարկաներու և
բարոյական օգուտներու, զորոնք, *Il fermo proposito*
շրջաբերական կոնգակին համեմատ պարտական է
փրկելու ամէն գնով՝ ծայրագոյն վտանգէն, ուր այս
ժառանգութիւնը կարելի է կորստեան ենթարկուի:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ամեն. Գերերջ. Հոգեւոր Տէրը շնորհաւորա-
կան հեռագիր մը ուղղեց Վսեմ Ռաֆայէլ Կարգին
նայ Մերի Տէյ Վայի. Ս. Քահանայապետին արտա-
քին գործոց Պաշտօնէին, անոր անուան տարեդարձի-
նաթիւն. Ն. Վսեմ. Տէրութիւնը անմիջապէս հե-
ռագրու խորին շնորհակալութիւն յայտնեց Ն. Ամե-
նապատուութեան:

Արհիւրապառն Նազեան, վիճակաւոր Տրապի-
զոնի կը գտնուի այժմ Մարզուան, ուր Աղիւսա-
րեւան եղբայրութեան քանակ հինգամայ Յորեկեանը
պիտի կատարէ Նոյեմբեր 7ին: Այս առթիւ փառա-
ւոր ներկայացում մը տեղի պիտի ունենայ, և պիտի
կատարուին Աստուծոյն հանգէներ:

Վերջերս Սամսոն հեղեղանման անձրեւ տեղացեր
և մեծ աւերներ գործեր է: Զուրջ կոխեր է նաև Հայ
Կաթողիկէից առաջնորդարանը և եկեղեցին, բայց
բարեբախտաբար մեծ վնաս մը չէ պատահեր:

Ս. Փրկիչ Մայր-Եկեղեցւոյն օծումէն ի վեր
համատարած էր և հետզհետէ ծաղկան էր հոն,
ինչպէս նաև շատ Պատրիարքական թեմերու մէջ, Քա-
ւարանի եղբայրութիւն անունով բարեպաշտական ըն-
կերութիւն մը, որուն նպատակն էր թէ Տաղաւարնե-
րու և Մեաշիոց օրերուն, թէ՛ ի մասնաւորի Քաւա-
րանի հոգւոց նուիրուած նոյեմբեր ամսուն
մէջ պատարագներ և հանգստեան պաշտօններ ընել
տալ ոչ միայն նոյն եղբայրութեան ննջեցեալ անգամ-
ներուն այլ և ամէն քաւարանի հոգւոց և յատկապէս
լքեալ հոգւոց համար: Իւրաքանչիւր բնասնիք նոյն
ամսուն մէկ օրուան մէջ իր ննջեցեալներուն հոգւոյն
համար պատարագ և պաշտօն կատարել կու տար:

Ժամանակ անցնելով աս ընկերութիւնը իր նախ-
կին ոգեւորութիւնը կորուսած էր: Ամեն. Գերերջ.
Հոգեւոր Տէրը նկատի առնելով այս եղբայրութեան
օգուաններն ու կարեւորութիւնը երկու տարի առաջ
վերստին հաստատեց նոյնը, և անոր կեդրոն ըրաւ Ս.
Աստուածածին Աթոս անիստ եկեղեցին:

Այս նոյեմբեր ամսուն մէջ պիտի տեղի ունենան
հետեւեալ պատարագներն ու պաշտօնները.

- Նոյեմբեր 4. Դար. Ամէն ննջեցելոց համար:
2. Հանգուցեալ Կաթողիկոսներու, Արքե-
պիսկոպոսներու, և Եպիսկոպոսներու
համար:
6. Եջ. Հասուն Կաթողիկոս Միւրանաւորին
հոգւոյն համար. (ժամը 9ին)
9. Կիր. Ննջեցեալ Քահանաներու, Սար-
կաւագներու Դպիրներու և Մայրա-
պետներու համար:

16. Կիր. Քաւարանի եղբայրութեան նըն-
ջեցեալ Անդառնեւուն համար:
23. Կիր. Նուիրապետութեան ննջեցեալ
բարեբախտեւուն համար:
30. Քաւարանի լքեալ հոգիներուն հա-
մար:

Սեպտ. 24ին Ա. Յղութեան Կուսանաց Կարգին
Մայր Վանատան մատարան մէջ յուզիչ արարողութիւն
մը տեղի ունեցաւ, ընդ նախագահութեամբ Ամեն.
Հոգեւոր Տէրոյ. հետեւեալ վեց նորոնջաք կատարեցին
իւրեց ուխտը:

- Քոյր Գեղարուտէ Թիւթիւնճեան
» Ճէմա Փղասեան
» Չէլէսթին Կապատեան
» Փօլին Պայեան
» Բերկրօհի Եղեան
» Չիլիկա Գարբիէան:

Ն. Ամենապատուութիւնը այս առթիւ գեղեցիկ
թարղ մը խօսեցաւ.

Հոկտ. 19ին և 20ին, Ս. Ղազարի կղզեակին
մէջ Միթիթարեան Միւրանութիւնը շքեղօրէն տօնեց
Հայ գրերու գիւտին 1500 ամեակը և Հայ տպագրու-
թեան 400 ամեակը: Կիրակի օրը սկսաւ հանգէսը
ձոյնաւոր պատարագով զոր մատոյց Արհիւրապառն
Կիւրեղեան Աբաշայրը: Երկուշաբթի կէսօրէն առաջ
ժամը 10ին տեղի ունեցաւ գրական և երաժշտական
հանդէս մը. կէսօրն յետոյ ժամը 4ին, այցելութիւն
Ս. Ղազարի Մատենադարանին և տպարանին հին
ձեռագիր և տպեալ գիրքերուն. ժամը 2ին, սեղան.
Միւրաններուն և հրաւիրեալներուն համար:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Բարենորոգմանց ինչորէն մասին Մ. Սաղանօֆ
հետեւեալ յայտարարութիւնը ըրեր է.

«Բարի լի մէջ Մ. Պարթուի և Մ. Բիշնի հետ
անեցած տեսակցութիւններէս հասկցայ թէ կատար-
եալ համաձայնութիւն կը տիրէ մեր միջեւ: Ուստի,
Պերլինի մէջ տեղի ունեցած տեսակցութիւնները կա-
տարեալ համաձայնութիւն առաջ բերին Հայաստանի
ներմուծուելիք բարենորոգմանց մասին: Կը կարծեմ
թէ Թուրքիոյ յաջէ կը պահանջէ բացարձակապէս,
ընդ առաջ երթալ տէրութեանց փափաքներուն,
քանի որ անոնք չեն զգչիր Սուլթանին վեհապետու-
թեան սկզբունքին և կը ձգտին երաշխաւորել խաղա-
ղութիւնն ու կարգ կանոնն այն երկիրներուն մէջ:»

Ի Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	689
Ֆէնէյօնրն իլ Բարգը	691
Ազգ եւ Կրօնք	693
Եօթնեակ Բիւսնօնի	695
Եսթը	696
Այլեայլ	699
Գաթիլի Մեգնէպի Էսաղար	701
Տեղեկագրական	703

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Երաբարքերի, Բեք. Պատմական փողոց Եւ. Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գիւն 5 դահեկան, էջ 144 ամուր քոթակագրմ

Գրքոյկիւ երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վար-
դապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ
կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ա-
մուր Թղթակագրմը 2 դհկն.:

